Հավելված 6
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»

ք.Վանաձոր «07» ապրիլի 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՂԱՐԱԲԻԼԻՍԱ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լևոն Ջաղացպանյան-ի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **5450000 (հինգ միլիոն չորս հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:[19]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

---

[19] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

---

[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 [23]

7.7 [24]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ՝ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	«ՂԱՐԱՔԻԼԻՍԱ»ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
Կենտրոնական գանձապետարան	«Յունիբանկ»ՓԲԸ
ՀՀ 900232521022	ՀՀ 24101101941100
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06929659
_____Մ.Ասլանյան	_____Լ. Ջաղացպանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 07 » 04 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/2	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ-տեխ. բնութագիրը * տես ներքևում: Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ լիցենզիան՝ *ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)՝* ըստ հետևյալ ներդիրի *1) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.* *2) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.* *3) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր.* *4) էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր.*առկա է: ***Ճարտարապետների համար ներկայացնել արտոնագիր Ա1 դասի տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ***	դրամ	5450000	5450000	1	Վանաձոր համայնքի վարչական տարածք, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21	Պայմանագրի կնքման պահից 45 օրացուցային օր

		Կոնսորցիումի անդամների համար ներկայացնել արտոնագիր տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ-առկա է: Մասնագիտական փորձառություն համարվող նշված լիցենզիայի շրջանակներում նմանատիպ կատարված նախագծային աշխատանքները մասնավորապես՝ •Այգիների, պուրակների, հրապարակների բարեկարգում, կառուցում, հիմնանորոգում •Կրթական օբյեկտների կառուցում, հիմնանորոգում •Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում •Շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների նախագծերի իրականացում-առկա է: «ՂԱՐԱՔԻԼԻՍԱ»ՍՊԸ-ն ապահովված է անհրաժեշտ մասնագետներով – Ճարտարապետ՝2 հոգի /3 տարվա աշխ. փորձով/, Նախագծող-կոնստրուկտոր ՝ 2 հոգի/3 տարվա աշխ. փորձով/, Նախագծող – էլեկտրաէներգետիկ՝1հոգի/3 տարվա աշխ. փորձով/, Նախագծող – ջերմաէներգետիկ՝1հոգի/3 տարվա աշխ. փորձով/, Նախագծող – հիդրոտեխնիկ՝1հոգի/3 տարվա աշխ. փորձով/:					

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

* ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Վանաձոր համայնքի մի շարք այգիների և պուրակների հիմնանորոգում

1	***Ծրագրի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ
2	***Ֆինանսավորման աղբյուրը***	Վանաձոր համայնքի 2020թ. բյուջե
3	***Պատվիրատու***	Վանաձորի համայնքապետարան
4	***Աշխատանքի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
5	***Աշխատանքի տեսակը***	Կառուցում, վերակառուցում, ուժեղացում, հիմնանորոգում
6	***Նախագծման փուլը***	Աշխատանքային նախագիծ

7	***Նախագծման հիմնական պահանջներ***	Նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ օբյեկտները՝ 1. Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու հիմնանորոգում - 2.6 հա 2. Տարոն-4 թաղամասում նոր այգու հիմնում - 0.9 հա 3. Տարոն-2 թաղամասում նոր պուրակի հիմնում - 0,25 հա Հիմնանորոգման աշխատանքներում նախատեսել հետևյալ գործերը՝ Բետոնե դեկորատիվ սալիկների փոխարինում, եզրաքարերի փոխարինում, սիզամարգերի բարեկարգում, պուրակային լուսավորության կառուցում: Սմարթ դետալների տեղադրում, շատրվանների կառուցում, պարիսպների հիմնանորոգում և այլն: **Եռաչափ տեսքերի ներկայացում**:
8	***Ընդհանուր դրույթներ***	Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք)
		Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն
		Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով և ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով
		Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի
		Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման
		Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան
		-նախագծվող տարածքների գեոդեզիական, տախեոմետրիկ հանույթի իրականացում
		- ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր
		- նախահաշիվ
		- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ
9	***Համաձայնեցումներ***	Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության պետական լիազոր մարմինների

		հետ
10	***Փորձաքննություն***	Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում

Վանաձոր համայնքի Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանի կենտրոնական մասնաճյուղի հիմնանորոգում

1	***Ծրագրի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ
2	***Ֆինանսավորման աղբյուրը***	Վանաձոր համայնքի 2020թ. բյուջե
3	***Պատվիրատու***	Վանաձորի համայնքապետարան
4	***Աշխատանքի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
5	***Աշխատանքի տեսակը***	Կառուցում, վերակառուցում, ուժեղացում, հիմնանորոգում
6	***Նախագծման փուլը***	Աշխատանքային նախագիծ
7	***Նախագծման հիմնական պահանջներ***	Նախատեսվում է հիմնանորոգել ք. Վանաձոր, Թատերական 4 հասցեում գտնվող Վանաձորի Հր. Մաթևոսյանի անվան գրադարանի գլխավոր մասնաճյուղի հիմնանորոգում / ընդհանուր մակերեսը 300 քմ/: Մասնավորապես՝ Ճակատային վիտարժների փոխարինում Ներքին պատերի և առաստաղի վերանորոգում Հատակների հիմնանորոգում Էլ. սնուցման և լուսավորության ներքին ցանցերի ամբողջական փոխարինում նոր համակարգերով, Էլ. Սնուցմամբ ջեռուցման համակարգի նախագծում Ներքին դռների փոխարինում: Ներքին բոլոր ինժեներական նոր ցանցերի կառուցում: Հակահրդեհային ազդանշման համակարգի կառուցում: Արտաքին եռաչափ տեսքի նախագծում: Ընտրված նյութերի գույնը և ձևը համաձայնեցնել ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի հետ:
8	***Ընդհանուր դրույթներ***	Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք)
		Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն
		Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորս օրինակ թղթային

		օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով
		Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի
		Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման
		Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան
		-նախագծվող տարածքների գեոդեզիական, տախեոմետրիկ հանույթի իրականացում
		- ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր
		- նախահաշիվ
		- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ
9	***Համաձայնեցումներ***	Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ:
10	***Փորձաքննություն***	Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում

Վանաձոր համայնքի Հրաչյա Կլեկչյանի անվան թիվ 1 մշակույթի տան հիմնանորոգում

1	***Ծրագրի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ
2	***Ֆինանսավորման աղբյուրը***	Վանաձոր համայնքի 2020թ. բյուջե
3	***Պատվիրատու***	Վանաձորի համայնքապետարան
4	***Աշխատանքի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
5	***Աշխատանքի տեսակը***	Կառուցում, վերակառուցում, ուժեղացում, հիմնանորոգում
6	***Նախագծման փուլը***	Աշխատանքային նախագիծ
7	***Նախագծման հիմնական պահանջներ***	Նախատեսվում է հիմնանորոգել ք. Վանաձոր, Նարեկացի փող. հասցեում գտնվող Վանաձորի Հր. Կլեկչյանի անվան թիվ 1 մշակույթի տան հիմնանորոգում / ընդհանուր մակերեսը 300 քմ/: Մասնավորապես՝ Ճակատային վիտարժների փոխարինում

		Ներքին պատերի և առաստաղի վերանորոգում Հատակների հիմնանորոգում Էլ. սնուցման և լուսավորության ներքին ցանցերի ամբողջական փոխարինում նոր համակարգերով, Էլ. Սնուցմամբ ջեռուցման համակարգի նախագծում Ներքին դռների փոխարինում: Ներքին բոլոր ինժեներական նոր ցանցերի կառուցում: Հակահրդեհային ազդանշման համակարգի կառուցում: Արտաքին եռաչափ տեսքի նախագծում: Ընտրված նյութերի գույնը և ձևը համաձայնեցնել ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի հետ:
8	***Ընդհանուր դրույթներ***	Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք)
		Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն
		Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով
		Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի
		Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման
		Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան
		-նախագծվող տարածքների գեոդեզիական, տախեոմետրիկ հանույթի իրականացում
		- ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր
		- նախահաշիվ
		- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ
9	***Համաձայնեցումներ***	Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ:
10	***Փորձաքննություն***	Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում

Վանաձոր համայնքի մի շարք պանելային բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների իրականացում

1	***Ծրագրի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ
2	***Ֆինանսավորման աղբյուրը***	Վանաձոր համայնքի 2020թ. բյուջե
3	***Պատվիրատու***	Վանաձորի համայնքապետարան
4	***Աշխատանքի անվանումը***	Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
5	***Աշխատանքի տեսակը***	Կառուցում, վերակառուցում, ուժեղացում, հիմնանորոգում
6	***Նախագծման փուլը***	Աշխատանքային նախագիծ

7 ***Նախագծման հիմնական պահանջներ***

h/h	Հասցեն	Կառ. տարեթիվ	հարկ.	բնակ. քանակ	Տանիքի մակերեսը
1.	Տ. Մեծի 77	1966	9	59	432
2.	Տ. Մեծի 59	1978	9	80	1140
3.	Տ. Մեծի 34/1	1982	9	32	390
4.	Տ. Մեծի 34/2	1982	9	25	390
5.	Տ. Մեծի 34/3	1982	9	32	390
6.	Տ. Մեծի 34/4	1981	9	25	390
7.	Տ. Մեծի 34/5	1981	9	32	390
8.	Վարդանանց 23	1980	9	51	590
9.	Վարդանանց 82	1985	9	90	1187
10.	Վարդանանց 84	1982	9	90	1187
11.	Վարդանանց 86	1983	9	90	1187

Նախատեսվում է հետևյալ շենքերը

Ընտրված նյութերի գույնը և ձևը համաձայնեցնել ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի հետ:

8 ***Ընդհանուր դրույթներ***

- Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք)
- Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն
- Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով

		Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի
		Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման
		Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան
		-նախագծվող տարածքների գեոդեզիական, տախեոմետրիկ հանույթի իրականացում
		- ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր
		- նախահաշիվ
		- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ
9	***Համաձայնեցումներ***	Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ: ՄԱԿ-ի համապատասխան փորձագետների հետ:
10	***Փորձաքննություն***	Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232521022
ՀՎՀՀ 06901936

_____/Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՂԱՐԱՔԻԼԻՍԱ»ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
«Յունիբանկ»ՓԲԸ
ՀՀ 24101101941100
ՀՎՀՀ 06929659

_____Լ. Ջաղացպանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 07 » 04 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/2	***Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ***			5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000	5450000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232521022
ՀՎՀՀ 06901936

_____Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՂԱՐԱՔԻԼԻՍԱ»ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
«Յունիբանկ»ՓԲԸ
ՀՀ 24101101941100
ՀՎՀՀ 06929659

_____Լ. Ջաղացպանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/38»ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն